

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ

Հակոբյան Հարություն Սլավիկի

ՏԵՐԱՐԵՇՈՅԱՅԻՆ ճԱԾՎԱՅԹՄԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՄԵՏԱԿԱՆ ԵՎ
ՊԼԱԶՄՈՆԱՅԻՆ ԱԼՔԱՏԱՐՆԵՐՈՒՄ

Ա.04.03 - «Ռադիոֆիզիկա» մասնագիտությամբ
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2012

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Акопян Арутюн Славикович

РАСПРОСТРАНЕНИЕ ТЕРАГЕРЦОВОГО ИЗЛУЧЕНИЯ В
МЕТАЛЛИЧЕСКИХ И ПЛАЗМОННЫХ ВОЛНОВОДАХ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата
физико-математических наук по специальности
01.04.03 - «Радиофизика»

ЕРЕВАН – 2012

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԿԳԽ Երևանի պետական համալսարանում:

Գիտական դեկավար՝ ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր
Յու.Յ. Ամենային

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր
Ռ.Բ. Ալավերդյան
ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր
Ե.Ռ. Գազագյան

Արածատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և Էլեկտրոնիկայի ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2012թ. մայիսի 26-ին ժամը 12:00-ին
Երևանի պետական համալսարանի 049 Փիգիկայի մասնագիտական խորհրդի
նիստով: Նաև՝ 0025, Երևան, Ա. Մանուկյան 1:

Ասենախոսությանը կարելի է ծանրթանալ ԵՊՀ գրադարանում:
Սեղմահին առաջընթաց է 2012թ. ապրիլի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քաղաքության՝



ֆ.մ.գ.թ., դոցենտ
Վ.Պ. Քայլանթարյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете МОН РА

Научный руководитель: д.ф.м.н., профессор
Ю.О. Аветисян

Официальные оппоненты:
д.ф.м.н., профессор
Р.Б. Алaverдян
д.ф.м.н., профессор
Э.Д. Газазян

Ведущая организация: Институт радиофизики и электроники НАН РБ

Защита диссертации состоится 26 мая 2012г. в 12:00 часов,
на заседании специализированного совета 049 по физике при Ереванском
государственном университете по адресу: 0025 Ереван, ул. А. Манукяна 1

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.
Автореферат разослан 25 апреля 2012г.

Ученый секретарь специализированного совета:



к.ф.м.н., доцент
В.П. Калантарян

ԱՇԽԱՏԱՍՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ

ՈՒԽՈՒՄՍԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տասնամյակներում էլեկտրամագնիսական ալիքների տերահերցային (ՏՀց) տիրույթը մեծ հետաքրքրություն է առաջացրել գիտության հիմնարար և կիրառական ոլորտներում, ինչպիսիք են ՏՀց նյութաբանությունը, հեռահաղորդակցությունը, միջավայրերի մոնիթորինգը, հասարակական օբյեկտների անվտանգությունը և այլն [1]: Ներկայումս ՏՀց ալիքների տեխնիկայի զարգացումը առավելապես ուղղված է կոմպակտ ինտեգրալային սարքերի ստեղծմանը: Այդ կապակցությամբ հրատապ խնդիր է այնպիսի ՏՀց ալիքատարների մշակումը, որոնք հնարավորություն կընձեռեն ապահովելու միջիանգուցային կապերը կոմպակտ ՏՀց սարքավորման շրջանակներում: Սովորական ալիքատարների մինիմալ լայնական չափսերը կես ալիքի երկարության կարգի են: Այդ պատճառով ՏՀց տիրույթում ալիքատարների չափսերը $3 \div 4$ կարգով գերազանցում են ինտեգրալային շղթաների էլեկտրոնային տարրերի (դիոդ, տրանզիստոր) չափսերը: Այդ կապակցությամբ ՏՀց ինտեգրալային շղթաների զարգացման համար աճել է ճառագայթումը ենթաալիքային չափսերում (դիֆրակցիոն սահմանից փոքր) տեղայնացնող ալիքատարների պահանջը: Բացի վերը նշվածից ենթաալիքային չափսերով ՏՀց ալիքատարները չափազանց գրավիչ են նաև բազմաթիվ այլ ոլորտներում կիրառման համար, ինչպես օրինակ նուրբ թաղանթային նյութերի սպեկտրոսկոպիայում [2]: ՏՀց ալիքի տեղայնացումը շատ փոքր լայնական չափսերում բերում է ալիքի ինտենսիվության աճին, որն իր հերթին բերում է նյութի հետ ալիքի փոխազդեցության աճին:

Օպտիկական տիրույթի էլեկտրամագնիսական ալիքների խիստ տեղայնացման համար վերջին ժամանակներս լայնորեն կիրառվում են պլազմոնային ալիքատարները [3]: Մակերևութային պլազմոն պոլարիտոնները (ՄՊՊ) իրենցից ներկայացնում են էլեկտրամագնիսական ալիքի և մետաղում էլեկտրոնային թանձրուկի համատեղ տարածվող տատանումներ, որոնք տարածվում են մետաղ-դիէլեկտրիկ բաժանման սահմանի երկայնքով և էքսպոնենցիալ օրենքով մարում են դեպի միջավայրերի խորքը գնալիս: ՄՊՊ-

Ները հնարավորություն են տալիս էլեկտրամագնիսական ալիքը տեղայնացնել Ենթաալիքային չափսերում՝ շրջանցելով դիֆրակցիոն սահմանը:

Սակայն պլազմանային ալիքատարների գաղափարը անմիջականորեն տեղափոխվել օպտիկականից ՏՀց տիրույթ հնարավոր չէ, քանի որ դաշտի ուժեղ տեղայնացում առաջանում է միայն այն ՄՊՊ-ների դեպքում, որոնց հաճախությունները մոտ են պլազմային հաճախությանը: Պլազմային հաճախությունը մետաղներում ընկած է տեսանելի և ուլտրամանուշակագույն տիրույթներում: Դետևաբար, ՏՀց հաճախությունների տիրույթում ՄՊՊ-ներ գրգռելու համար անհրաժեշտ են ցածր պլազմային հաճախությամբ նյութեր:

Ցածր պլազմային հաճախություն կարելի է ստանալ պարբերական անցքերով մետաղական մակերևույթում, որտեղ պլազմային հաճախությունը որոշվում է անցքերի չափսերով և պարբերականությամբ [4]: Սակայն այսպիսի պարբերական համակարգերի հիմնական թերությունն այն է, որ ՄՊՊ-ներ կարելի է գեներացնել միայն ներ հաճախային տիրույթում: Ցածր հաճախային պլազմոններ գրգռելու համար պարբերական համակարգին այլընտրանք են կիսահաղորդիչները [5]: Քանի որ կիսահաղորդիչներում լիցքակիրների խտությունը շատ ավելի փոքր է, քան մետաղներում, ուստի պլազմային հաճախությունը նույնպես ավելի փոքր է, քան մետաղներինը և ընկած է միջին կամ հեռու ինֆրակարմիր տիրույթներում:

Ատենախոսության մեջ դիտարկվել են տարբեր մետաղական և պլազմանային ՏՀց ալիքատարներ: Դետագոտվել են այն պայմանները, որոնց դեպքում ապահովվում է ալիքի տեղայնացում Ենթաալիքային չափսերում և փոքր կորուստներով ու առանց աղավաղումների տարածում, ինչն էլ վկայում է աշխատանքի արդիականության մասին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Ատենախոսության հիմնական նպատակն է մշակել և հետազոտել ՏՀց տիրույթի ալիքատարներ, որոնք կապահովեն ՏՀց ալիքների տեղայնացումը Ենթաալիքային չափսերում: Միաժամանակ այդ ալիքատարները պետք է օժտված լինեն փոքր կորուստներով և չնչին դիսպերսիայով, ինչի շնորհիվ կարող են ապահովվել լայնաշերտ ՏՀց ճառագայթման տարածումը փոքր աղավաղումներով:

Աստենախոսության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. հետազոտել երկու գլանային մակերևույթներից կազմված ալիքատարում (ԳՄԱ) ՏՀց իմայուսների աննշան աղավաղումներով և փոքր կորուստներով տարածման հնարավորությունը
2. ուսումնասիրել ԳՄԱ-ում էլեկտրական դաշտի բաշխվածությունը, որը հնարավորություն կտա գնահատելու ՏՀց ալիքների տեղայնացման աստիճանը
3. հետազոտել կիսահաղորդչի մակերևույթի վրա տեղադրված դիէլեկտրորական ելուստով պլազմոնային ալիքատարում (ԴԵՊԱ) ՏՀց ալիքների տարածման առանձնահատկությունները, ինչպես նաև տեղայնացմանը զուգընթաց համեմատաբար մեծ տարածման երկարություն ապահովելու հնարավորությունը
4. հետազոտել ՏՀց փոքրի ենթաալիքային տեղայնացումը հիբրիդային պլազմոնային ալիքատարներում:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

1. Մշակվել է տեսական մոդել, որը հնարավորություն է տալիս հաշվարկելու էլեկտրական դաշտի բաշխվածությունը և ալիքատարային մոդի դիսպերսիան ԳՄԱ-ում: Ցույց է տրվել, որ ԳՄԱ-ում կարելի է ստանալ ՏՀց դաշտի երկարակի տեղայնացում:
2. Տեսականորեն և թվային մեթոդներով ցույց է տրվել, որ ԳՄԱ-ում տեղայնացումը կարելի է զգալիորեն մեծացնել՝ մետաղի փոխարեն օգտագործելով լեգիրացված կիսահաղորդիչ:
3. Փորձնականորեն հետազոտվել է մետաղական ԳՄԱ-ում ՏՄօ հիմնական մոդի տարածման առանձնահատկությունները: Ցույց է տրվել, որ ՏՄօ հիմնական մոդի դեպքում ՏՀց իմայուսները մետաղական ԳՄԱ-ում առանց աղավաղումների և փոքր կորուստներով կարող են անցնել բավական երկար տարածություն: Փորձնականորեն հաստատվել է նաև, որ ԳՄԱ-ն ապահովում է ՏՀց ալիքների երկարակի տեղայնացում:
4. Տեսականորեն և թվային մեթոդներով հետազոտվել է ԴԵՊԱ-ում ՏՀց ալիքների երկարակի տեղայնացման հնարավորությունը: Ցույց է տրվել, որ այդ

ալիքատարում դիելեկտրական ելուստի օպտիմալ չափսերի ընտրությամբ կարելի է մեծացնել ՏՀց դաշտի տեղայնացումը՝ ապահովելով համեմատաբար մեծ տարածման երկարություն:

5. Տեսականորեն և թվային մեթոդներով հետազոտվել է կիսահաղորդիչ-ճեղք-դիելեկտրիկ կառուցվածքով հիբրիդային պլազմոնային ալիքատարը, որը ապահովում է ՏՀց ալիքների բավական ուժեղ տեղայնացում:

ԳՈՐԾՆԱԿԱՍ ԱՐԺԵՔԸ

1. ԳՄԱ-Ծ, շնորհիվ թույլ դիսպերսիայի, փոքր կորուստների և երկչափ տեղայնացման, կարող է կիրառվել ՏՀց սպեկտրոսկոպիայում, գերարած կապի համակարգերում և այլուր:
2. Ենթաալիքային լայնական չափսերով ԴԵՊԱ-Ծ համեմատաբար մեծ տարածման երկարություն և երկչափ տեղայնացում ապահովելու շնորհիվ նպաստավոր պայմաններ է ստեղծում կոմպակտ, նոր սերնդի ՏՀց ինտեգրալ համակարգերի զարգացման համար:
3. Կիսահաղորդիչ-ճեղք-դիելեկտրիկ կառուցվածքով ենթաալիքային լայնական չափսերով հիբրիդային պլազմոնային ալիքատարը, շնորհիվ ուժեղ տեղայնացման, նույնականացման կարող է օգտագործվել ՏՀց ինտեգրալ համակարգերում, ինչպես նաև ՏՀց պատկերների ստացման համար և այլ խնդիրներում:

ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՍ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. ԳՄԱ-Ծ ապահովում է ՏՀց դաշտի երկչափ տեղայնացում, որը կախված է ինչպես գլանների շառավղից, այնպես էլ գլանային մակերևույթների միջև եղած հեռավորությունից:
2. Մետաղական ԳՄԱ-Ծ նախընտրելի է այն դեպքերում, երբ հաճախությունների լայն տիրույթում անհրաժեշտ է ապահովել ՏՀց ալիքների տարածման մեծ երկարություն և արհամարհելի փոքր դիսպերսիա:
3. ԳՄԱ-ում ուժեղ տեղայնացում ստանալու համար անհրաժեշտ է մետաղի փոխարեն օգտագործել լեգիրացված կիսահաղորդիչ: Փոփոխելով լեգիրացված կիսահաղորդիչ լիցքակիրների կոնցենտրացիան՝ կարելի է

ապահովել

նաև

տեղայնացում - կորուստներ

օպտիմալ

փոխարարակցություն:

4. ՂԵՊԱ-ում ՏՀց դաշտի երկչափ տեղայնացումը պայմանավորված է դիէլեկտրական ելուստով, իսկ ելուստի օպտիմալ չափսերի ընտրությամբ կարելի է ՏՀց դաշտի տեղայնացման մեջացմանը զուգընթաց մեջացնել նաև էֆեկտիվ տարածման երկարությունը:
5. Կիսահաղորդիչ-ճեղք-դիէլեկտրիկ կառուցվածքով հիբրիդային ալազմոնային ալիքատարում ՏՀց դաշտը հիմնականում տեղայնացվում է ճեղքում, իսկ տեղայնացման աստիճանը պայմանավորված է ճեղքի հաստությամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Ատենախոսության հիմնական արդյունքները գեկուցվել են «Conference on Lasers and Electro-Optics, CLEO» (San Jose, USA, 2010), «Modern Problems in Optics and Photonics» (Yerevan, Armenia, 2009), «International Conference on The Technique of Microwave and THz Waves and its Application in Biomedical and Radar Technologies and in Remote Sensing» (Ashtarak-Aghveran, Armenia, 2010), «8th International Conference on Semiconductor Micro- and Nanoelectronics» (Yerevan, Armenia, 2011) միջազգային գիտաժողովներում, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի Գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի սեմինարներում:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական արդյունքները տպագրվել են 7 գիտական աշխատանքներում, որոնց ցուցակը ներկայացված է սեղմագրի վերջում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և 120 անուն պարունակող գրականության ցանկից: Աշխատանքում առկա են 44 նկար, 4 աղյուսակ: Աշխատանքի ընդիանուր ծավալը 116 էջ է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է աշխատանքի արդիականությունը, ձևակերպված են նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները: Նշված է ստացված արդյունքների գիտական նորույթը և գործնական արժեքը:

Առաջին գլխում դիտարկված են ՏՀց տիրույթի էլեկտրամագնիսական ալիքների ուղղորդող և տեղայնացնող համակարգերի առանձնահատկությունները: Քննարկված են մի քանի տիպի մետաղական և պլազմոնային ալիքատարների առանձնահատկությունները ՏՀց տիրույթում:


1.1 պարագրաֆում դիտարկված են ՏՀց տիրույթում մինչ այժմ հետազոտված ալիքատարների հիմնական տիպերը, որոնցից երկկապ կառուցվածք ունեցող ալիքատարներն ապահովում են ՏՀց ինպուլսների առանց աղավաղումների տարածում:

1.2 պարագրաֆում քննարկված են ՄՊՊ-ների առանձնահատկությունները ՏՀց տիրույթում: Նկարագրված է ՏՀց տիրույթի պլազմոնների գրգռման հնարավորությունը պարբերական մետաղական համակարգերում և լեգիրացված կիսահաղորդիչներում:

1.3 պարագրաֆում դիտարկված են ուղղորդող համակարգերում օգտագործվող տարրեր նյութերի կոմպլեքս դիէլեկտրական թափանցելիությունները ՏՀց տիրույթում: Օգտագործելով Դրույթի քանածկը՝ հաշվարկել են որոշ մետաղների և կիսահաղորդիչների դիէլեկտրական թափանցելիությունների կախվածությունը հաճախությունից:

1.4 պարագրաֆում ներկայացված են ՏՀց տիրույթում հետազոտված մի քանի մետաղական և պլազմոնային ալիքատարներ: Մանրամասն դիտարկված է զուգահեռ թիթեղներով ալիքատարը (ԶԹԱ) [6], որտեղ ՏՀց ալիքները հիմնական ՏՄօ մոդի դեպքում (որն այլ կերպ անվանվում է քվազի-TEM մոդ) տարածվում են փոքր կորուստներով և աննշան աղավաղումներով: ԶԹԱ-ում հիմնական ՏՄօ մոդ գրգռելու համար անհրաժեշտ է, որ ընկնող ՏՀց ճառագայթումը լինի գծային բևեռացված ԶԹԱ-ի թիթեղներին ուղղահայաց հարթության մեջ:

1.5 պարագրաֆում հետազոտված է երկու գլանային մակերևույթներից կազմված ալիքատարում (ԳՄԱ)



Նկ. 1 Երկու գլանային մակերևույթներից կազմված ալիքատարի կառուցվածքը

է երկու գլանային մակերևույթներից կազմված ալիքատարում (ԳՄԱ) էֆեկտիվ բեկման ցուցիչը և տարածվող ալիքի դաշտի բաշխվածությունը: Ալիքատարը դիտարկվել է որպես ԶԹԱ, որի հարթությունների միջև $h(y)$ հեռավորությունը աստիճանաբար փոփոխվում է (նկ.1): ԶԹԱ-ում էֆեկտիվ բեկման ցուցիչը հակադարձ համեմատական է թիթեղների միջև հեռավորությանը [6].

$$n_{eff} \approx 1 + \frac{A}{h_0}, \quad (1)$$

$$\text{որտեղ } h_0\text{-ն թիթեղների միջև հեռավորությունն է, } A = \cos \frac{\varphi}{2} / k_0 \sqrt{|\dot{\varepsilon}|},$$

$\varphi = \arctan(\varepsilon'' / |\varepsilon'|)$, $k_0 = 2\pi/c$ ալիքային թիվն է օդում, f -ը հաճախությունն է, $\dot{\varepsilon}$ -ը թիթեղների նյութի կոնպլեքս դիէլեկտրական թափանցելիությունը ($\dot{\varepsilon} = \varepsilon' + i\varepsilon''$): $|y| \ll R$ հեռավորությունների դեպքում գլանային մակերևույթների միջև հեռավորությունը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

$$h(y) \approx h_0 + \frac{y^2}{R}, \quad (2)$$


որտեղ R -ը գլանների շառավիղն է: Հետևաբար ԳՄԱ-ում էֆեկտիվ բեկման ցուցիչ համար կստանանք.

$$N_{eff}(y) \approx 1 + \frac{A}{h_0 \left(1 + y^2 / h_0 R\right)} : \quad (3)$$

Այստեղից հետևում է, որ էֆեկտիվ բեկման ցուցիչն ալիքատարում առավելագույն արժեքը ընդունում է ճեղքի կենտրոնում ($y = 0$) և գնալով նվազում է y առանցքով սկզբնակետից հեռանալիս: Այդ պատճառով ԳՄԱ-ն կարող է տեղայնացնել S₂₁ ալիքը y ուղղությամբ՝ աստիճանաբար փոփոխվող բեկման

ցուցչով դիէլեկտրական ալիքատարմերի նման: Հետևաբար, ի տարրերություն ԶԹԱ-ի, որտեղ տեղի ունի դաշտի միաչափ տեղայնացում (x առանցքով՝ պայմանավորված թիեզմերի հեռավորությամբ, $Q\text{Մ}-ում$ տեղի ունի դաշտի երկչափ տեղայնացում (x և y առանցքներով>):

Նկ.2-ում պատկերված է n տիպի լեգիրացված սիլիցիումից ($N = 10^{18}$ սմ⁻³) և ուսկուց պատրաստված $Q\text{Մ}$ -ում ($R = 5$ մմ գլանմերի շառավղով և $h_0 = 0.1$ մմ մինիմալ հեռավորությամբ) էֆեկտիվ բեկման ցուցչի բաշխվածությունը 0.3 ՏՀց հաճախության դեպքում:




Նկ. 2 $Q\text{Մ}$ -ում էֆեկտիվ բեկման ցուցչի բաշխվածությունը ըստ y առանցքի 0.3 ՏՀց հաճախության դեպքում ա) լեգիրացված սիլիցիումի ($N = 10^{18}$ սմ⁻³) և բ) ուսկու դեպքում

ՏՀց տիրույթում մետաղներն ունեն չափազանց մեծ դիէլեկտրական թափանցելիություն (ուսկու համար 0.3 THz -ում $\varepsilon_{\text{Al}} = -1.12 \cdot 10^5 + i \cdot 7.22 \cdot 10^5$), որի արդյունքում A գործակիցը դառնում է փոքր և հետևաբար էֆեկտիվ բեկման ցուցչի գրադիենտը նույնական ստացվում է փոքր ($N_{\text{eff}} = 1.0014$, եթե $y = 0$, նկ.2բ): n տիպի լեգիրացված սիլիցիումն ունի համեմատաբար փոքր դիէլեկտրական թափանցելիություն ($N = 10^{18}$ սմ⁻³-ի համար 0.3 THz -ում $\varepsilon_{\text{Si}} = -6.7 + i \cdot 251.1$), որի հետևանքով A գործակիցը դառնում է ավելի մեծ, քան մետաղների դեպքում: Հետևաբար էֆեկտիվ բեկման ցուցչի գրադիենտը նույնական ստացվում է ավելի մեծ ($N_{\text{eff}} = 1.071$, եթե $y = 0$, նկ.2ա): Այդ պատճառով լեգիրացված սիլիցիումի դեպքում տեղայնացումը առանցքով ավելի ուժեղ է, քան ուսկու դեպքում:

Ուսկուց և լեգիրացված սիլիցիումից ($N = 10^{18}$ սմ⁻³) պատրաստված $Q\text{Մ}$ -ում ($R = 5$ մմ և $h_0 = 0.1$ մմ) 0.4 ՏՀց և 1 ՏՀց հաճախությունների դեպքում TM_0 մոդի

համար տեսականորեն ստացված ինտենսիվության բաշխվածությունները բերված են նկ.3-ում: Ալիքի տարածվող մոդի լայնքը (ինտենսիվության մաքսիմումի կես մակարդակին համապատասխան) լեզիրացված սիլիցիումի դեպքում 0.4 SRg -ում կազմում է 2.2 մմ, իսկ 1 SRg -ում՝ 1.5 մմ (նկ.3ա): Ուկու դեպքում 0.4 SRg -ում մոդի լայնքը 10 մմ է, իսկ 1 SRg -ում՝ 6.3 մմ (նկ.3բ): Նետևաբար հաճախության աճին գուգընթաց մոդի չափը ցանցքով նվազում է, այսինքն աճում է տեղայնացումը:



Նկ. 3 ա) Լեզիրացված սիլիցիումից ($N = 10^{18} \text{ ам}^{-3}$) և բ) ուկուց պատրաստված ԳՄԱ-ում TM_0 իմանական մոդի ինտենսիվության բաշխվածությունները 0.4 SRg (հոգ գծեր) և 1 SRg (կետագծեր) հաճախությունների համար

Նկ.3-ից ակնհայտ երևում է նաև, որ լեզիրացված սիլիցիումից պատրաստված ԳՄԱ-ում էլեկտրական դաշտը ավելի ուժեղ է տեղայնացված ալիքատարի կենտրոնում ($y = 0$), քան ուկուց ԳՄԱ-ի դեպքում: Ինչպես արդեն նշվեց, դա կապված է լեզիրացված սիլիցիումի համեմատաբար փոքր դիէլեկտրական թափանցելիության հետ: Անհրաժեշտ է նշել նաև, որ լեզիրացված սիլիցիումի դեպքում կլանումներն ավելի մեծ են, քան ուկու դեպքում:


Երկրորդ գլխում քննարկված են SRg ալիքների տարածման առանձնահատկությունները մի քանի տիպի պլազմոնային ալիքատարներում: Ուսումնասիրությունները իմանականում կատարվել են թվային մոդելավորման միջոցով: Դիտարկվել են երկու գլանային մակերևույթներից կազմված, ինչպես նաև կիսահաղողչի մակերևույթի վրա տեղադրված դիէլեկտրական ելուստով և

կիսահաղորդիչ-ճեղք-դիէլեկտրիկ կառուցվածքով պլազմոնային ալիքատարներ: Հետազոտվել են տարածվող էլեկտրամագնիսական ալիքի դաշտի բաշխվածությունը նշված ալիքատարներում, տեղայնացումը, կորուստները և այլ բնութագրեր:

2.1 պարագրաֆում քննարկված է վերջավոր տարրերի մեթոդ (ՎՏՄ) որպես ատենախոսության մեջ կիրառված թվային մոդելավորման հիմնական մեթոդ: Քննարկված են ՎՏՄ-ի հիմնա վրա աշխատող COMSOL Multiphysics ծրագրի կիրառման առանձնահատկությունները պլազմոնային ալիքատարներում էլեկտրամագնիսական ալիքների դաշտի մոդելավորման դեպքում:

2.2 պարագրաֆում թվային մեթոդներով հետազոտվել է լիցքակիրների $N = 10^{18}$ սմ⁻³ կոնցենտրացիայով n տիպի լեգիրացված սիլիցիումից պատրաստված ԳՄԱ-ում դաշտի բաշխվածությունը 0.3 S²g և 0.35 S²g հաճախություններով S²g ալիքների տարածման դեպքում: Հաճախության աճին գորգընթաց տարածվող մոդի լայնական չափը նվազում է, այսինքն աճում է տեղայնացումը: 0.3 S²g հաճախության դեպքում մոդի լայնական չափը 1 մմ է, իսկ 0.35 S²g հաճախության դեպքում՝ 0.7 մմ: Սակայն հաճախության աճի հետ անխուսափելի է կորուստների աճը: 0.3 S²g հաճախության դեպքում կլանման գործակցի համար թվային մոդելավորմամբ ստացվել է $\alpha \approx 0.3 \text{ м}^{-1}$, իսկ 0.35 S²g հաճախության դեպքում՝ $\alpha \approx 0.5 \text{ м}^{-1}$, որոնք մեծ ծշտությամբ համապատասխանում են տեսական հաշվարկով ստացված կլանման գործակիցների հետ:


2.3 պարագրաֆում դիտարկված է կիսահաղորդչի մակերևույթի վրա տեղադրված դիէլեկտրական ելուստով պլազմոնային ալիքատարը (ԴԵՊԱ): Դիտարկվել է InSb կիսահաղորդչի վրա տեղադրված կվարցե (SiO₂)



Նկ. 4 InSb-ի մակերևույթի վրա տեղադրված կվարցե ելուստով պլազմոնային ալիքատարի կառուցվածքը

ուղղանկյունաձև ելուստից ($w \times d$ չափսերով) կազմված ԴԵՊԱ-ն (նկ.4): ԴԵՊԱ-ի հիմնական բնութագրերը (էֆեկտիվ թեկման ցուցիչ, լայնական հատույթում ինտենսիվության բաշխվածություն, տարածման էֆեկտիվ երկար-


ություն) հաշվելու համար կիրառվել է էֆեկտիվ բեկման ցուցչի մեթոդ (ԵԲՑ) [7]: ԵԲՑ մեթոդով հաշվարկված ինտենսիվության բաշխվածությունների ճշտությունն ստուգելու համար կատարվել է նաև ԴԵՊԱ-ի թվային մոդելավորում: Թվային մոդելավորմանք ստացված դաշտի ինտենսիվության բաշխվածությունները ելուստի $d = 50$ մկմ, $w = 50$ մկմ և $d = 80$ մկմ, $w = 80$ մկմ չափսերով ԴԵՊԱ-ների դեպքերում ներկայացված է նկ. 5-ում:



Նկ. 5 ԴԵՊԱ-ում ինտենսիվության բաշխվածությունները ելուստի
ա) $d = 50$ մկմ, $w = 50$ մկմ և բ) $d = 80$ մկմ, $w = 80$ մկմ չափսերի դեպքում

Նկարներում ինտենսիվության առավելագույն արժեքին համապատասխանում է սև գույնը, իսկ նվազագույնին՝ սպիտակը: ԴԵՊԱ-ում դաշտը հիմնականում կենտրոնացված է ելուստում և մասնավորապես $\text{InSb}-\text{SiO}_2$ սահմանին մոտ: Ելուստների $d = 50$ մկմ, $w = 50$ մկմ և $d = 80$ մկմ, $w = 80$ մկմ չափսերով ԴԵՊԱ-ներում թվային մոդելավորմանք ստացված ինտենսիվության բաշխվածությունները համենատվել են ԵԲՑ մեթոդով ստացված արդյունքների հետ: Ինտենսիվության բաշխվածությունների համենատումը փոքր ելուստով ԴԵՊԱ-ում ցույց է տվել որոշակի անհամապատասխանություն երկու մեթոդների միջև: Սակայն ավելի մեծ ելուստով ԴԵՊԱ-ում ստացված ինտենսիվության բաշխվածությունները շատ լավ համընկնում են: Ելուստի $d = 50$ մկմ, $w = 50$ մկմ և $d = 80$ մկմ, $w = 80$ մկմ չափսերով ԴԵՊԱ-ների դեպքերում մոդի չափսը ըստ x առանցքի (տես նկ.4) $1 \text{ S}^2 \text{g}$ ($\lambda = 300$ մկմ, λ -ն ալիքի երկարությունն է) հաճախության դեպքում համապատասխանաբար 64 մկմ և 70 մկմ է, այսինքն ալիքատարը ապահովում է ենթալիքային տեղայնացում:


2.4 պարագրաֆում դիտարկված է կիսահաղորդիչ-ճեղք-դիէկտրիկ կառուցվածքով հիբրիդային պլազմոնային ալիքատարը: Դիտարկվող



Նկ. 6 Կիսահաղորդիչ-ճեղք-դիէկտրիկ կառուցվածքով ալիքատարի լայնական հատույթը

ալիքատարը բաղկացած է փոքր բեկման ցուցչով (ՓԲՑ) d հաստությամբ դիէկտրիկ շերտից, որը գտնվում է կիսահաղորդչի և մեծ բեկման ցուցչով դիէկտրիկի (ՄԲՑ) միջև (նկ.6): Որպես կիսահաղորդիչ դիտարկվել է InAs-ը: InAs-ը առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում այն պատճառով, որ այն հայտնի է որպես լավագույն

կիսահաղորդչային ՏՇց ճառագայթիչ [1]: Սա հնարավորություն է ստեղծում մեկ համակարգում ինտեգրելու ՏՇց ճառագայթիչը և ալիքատարը: Որպես փոքր բեկման ցուցչով դիէկտրիկ դիտարկվել է կվարց (SiO₂), իսկ մեծ բեկման ցուցչով դիէկտրիկ՝ սիլիցիում (Si): Ալիքատարում ճեղքի d հաստության աճին գուգընթաց էֆեկտիվ բեկման ցուցիչը նվազում է: Յետևաբար ՏՇց ճառագայթը հնարավոր է տեղայնացնել ալիքատարի լայնական ուղղությամբ՝ աստիճանաբար մեծացնելով ճեղքի հաստությունը, ինչը կարելի է հեշտությամբ իրականացնել սիլիցիումե շերտի մակերևույթին տալով գլանածն կամ ուղղանկյունածն տեսք: Նկ.7-ում պատկերված է թվային մոդելավորմամբ ստացված ինտենսիվության բաշխումները 1 ՏՇց հաճախությամբ ալիքի համար $R = 20$ մկմ շառավղով գլանածն և 5 մկմ լայնքով ուղղանկյունածն հատույթով սիլիցիումե շերտերի դեպքում:



Նկ. 7 Ինտենսիվության բաշխությունը սիլիցիումե շերտի ա) գլանածն և բ) ուղղանկյունածն դեպքում


Նկարներում ինտենսիվության առավելագույն արժեքին համապատասխանում է սև գույնը, իսկ նվազագույնին՝ սպիտակը: Մոդի լայնական չափը 20 մկմ շառավղով գլանով ալիքատարի դեպքում հորիզոնական ուղղությամբ 12 մկմ է (0.04λ), իսկ 5 մկմ լայնքով ուղղանկյունաձև ձողով ալիքատարի համար՝ 6 մկմ (0.02λ):

Երրորդ գլխում ներկայացված են մետաղական ԳՄԱ-ում S_3g ալիքների տարածման փորձարարական հետազոտությունները, որոնք կատարվել են ժամանակային տիրույթի S_3g սպեկտրոմետրի (S_3g ԺՏՍ) միջոցով: S_3g ԺՏՍ-ն ամբողջական համակարգ է, որը պարունակում է S_3g լայնաշերտ ճառագայթման աղբյուր, ինչպես նաև տերահերցային դաշտի ժամանակային տեսքը գրանցող ընդունիչ [8]:

3.1 և 3.2 պարագրաֆներում համապատասխանաբար դիտարկված են S_3g ճառագայթման գեներացման և դետեկտման եղանակները:

3.3 պարագրաֆում նկարագրված է փորձարարական սարքավորումը, և նրա հիմնական բաղկացուցիչ մասի՝ S_3g ԺՏՍ համակարգի աշխատանքի սկզբունքը:

3.4 պարագրաֆը նվիրված է մետաղական ԳՄԱ-ում S_3g ալիքների տարածման փորձարարական հետազոտություններին: ԳՄԱ-ն պատրաստվել է երկու մետաղական ոսկեպատ գլաններից, որոնց շառավիղը $R = 5$ մմ է, իսկ միմյանց միջև հեռավորությունը՝ $h_0 = 0.1$ մմ: ԳՄԱ-ի հետ S_3g ճառագայթման էֆեկտիվ միակցում ապահովելու համար ԳՄԱ-ի մուտքային նասում արված $\pm 10^\circ$ թերությամբ սեպաձև բացվածք: Ալիքատարի ընդիհանուր երկարությունը $L_{\Sigma} = 7.3$ սմ է, որից $L_{in} = 2.3$ սմ սեպաձև բացվածքին է: Նկ.8ա-ում պատկերված է S_3g իմպուլսի ժամանակային տեսքը առանց ալիքատարի (ազատ տարածությամբ) տարածվելիս և ալիքատարով տարածվող իմպուլսի տեսքը, որն օդում տարածվող իմպուլսից տարբերելու համար նկարում տեղաշարժված է ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական ուղղություններով: Իմպուլսների համեմատումը ցույց է տալիս, որ S_3g իմպուլսը ԳՄԱ-ում տարածվում է գրեթե առանց աղավաղունների: Դա հաստատում է նաև համապատասխան ֆուրիե սպեկտրը, ըստ որի ալիքատարը չունի ցածր հաճախային սահմանափակում (Նկ.8բ): Ալիքատարի ելքում S_3g փնջի տեղայնացման չափը գնահատելու համար օգտագործվել է այսպես կոչված “սուր եգրի” (knife edge) մեթոդը [9]: Չափումների



Նկ. 8 ա) S_Z իմպուլսների ժամանակային տեսքը
և բ) համապատասխան սպեկտրը

3 մմ, այսինքն մետաղական ԳՄԱ-ն չի ապահովում ենթաալիքային տեղայնացում: Դա պայմանավորված է նրանով, որ մետաղում S_Z տիրույթի պլազմոններ գրեթե չեն գրգռվում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երկու գլանային մակերևույթներից կազմված ալիքատարում (ԳՄԱ) ստացվել է S_Z դաշտի երկչափ տեղայնացում՝ շնորհիվ գլանային մակերևույթների կորուրյան: ԳՄԱ-ում տեղայնացումը կախված է գլանների շառավղից, գլանային մակերևույթների միջև նվազագույն հեռավորությունից և գլանների նյութից:
2. Մետաղական ԳՄԱ-ում TM₀ հիմնական մոդով S_Z լայնաշերտ իմպուլսները տարածվում են առանց աղավաղումների և փոքր կորուստներով: Ստացվել է

արդյունքները նույնպես հաստատում են, որ ալիքատարը ապահովում է S_Z ալիքի դաշտի երկչափ տեղայնացում: Փորձնականորեն ստացված ինտենսիվության բաշխվածությունները ԳՄԱ-ում բավարար ցցուրյամբ համընկնում են տեսականորեն ստացված արդյունքների հետ: Մոդի չափը ըստ x առանցքի (տես նկ.1) մոտավորապես հավասար է ճեղքի հաստությամբ՝ ~ 0.1 մմ: 0.4 S_Z և 1 S_Z հաճախությունների դեպքում մոդի չափը ըստ y առանցքի կազմում է համապատասխանաբար 5.4 մմ և

ՏՅՇ ճառագայթման ԳՄԱ-ի հետ միակցման արդյունավետության զգալի աճ՝ ԳՄԱ-ի նուտքային մասում արված սեպաձև բացվածքի շնորհիվ:

3. Լեգիրացված սիլիցիումից պատրաստված ԳՄԱ-ն ապահովում է ավելի ուժեղ տեղայնացում (0.3 S^{-1} -ում $0.1 \times 1 \text{ m}^2$ տիրույթում), քան մետաղե ԳՄԱ-ն: Սակայն տարածման երկարությունը համեմատաբար փոքր է լեգիրացված սիլիցիումում ազատ լիցքակիրների կողմից կլանման պատճառով: Փոփոխելով լեգիրացված սիլիցիումի լիցքակիրների կոնցենտրացիան՝ կարելի է ստանալ տեղայնացում - կորուստներ օպտիմալ փոխարարերակցություն:
4. InSb կիսահաղորդչի վրա տեղադրված կվարցե ուղղանկյունաձև ելուստով պլազմոնային ալիքատարը ապահովում է ՏՅՇ դաշտի երկչափ տեղայնացում, իսկ ելուստի օպտիմալ չափսերի ընտրությամբ ՏՅՇ դաշտի տեղայնացման մեջացմանը զուգընթաց աճում է նաև էֆեկտիվ տարածման երկարությունը: Ալիքատարում էֆեկտիվ բեկման ցուցչի մեթոդով հաշվարկված և թվային մոդելավորմամբ ստացված դաշտի բաշխվածությունները լավ համընկնում են, հատկապես ելուստի ոչ շատ փոքր չափսերի դեպքում:
5. InAs-SiO₂-Si կառուցվածքով հիբրիդային պլազմոնային ալիքատարում ՏՅՇ դաշտը հիմնականում տեղայնացվում է ճեղքում: Այդ ալիքատարը կարող է ապահովել խիստ տեղայնացված (1 S^{-1} -ում $\sim 0.0016\lambda \times 0.02\lambda = 3.2 \times 10^{-5}\lambda^2$ չափսերով) տարածվող մոդ համեմատաբար երկար՝ ~ 1 մմ տարածման երկարությամբ:

ՀՂՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. M. Tonouchi, *Nature Photonics* **1**, 97-105 (2007).
2. J. Zhang and D. Grischkowsky, *Opt. Lett.* **29**, 1617-1619 (2004).
3. S. Bozhevolnyi, *Plasmonic Nanoguides and Circuits*, Pan Stanford, Singapore, 2008.
4. J.B. Pendry, L. Martín-Moreno, and F.J. Garcia-Vidal, *Science* **305**, 847-848 (2004).
5. J.G. Rivas, M. Kuttge, H. Kurz, P.H. Bolivar, and J.A. Sánchez-Gil, *Appl. Phys. Lett.* **88**, 082106-082108 (2006).
6. B.G. Ghamsari and A.H. Majedi, *J. Appl. Phys.* **104**, 083108 (2008).
7. T. Tamir, *Guided-Wave Optoelectronics*, Springer-Verlag, Berlin, 1990.
8. P.R. Smith, D.H. Auston, M.C. Nuss, *IEEE J. Quantum Electron.* **24**, 255-260 (1988).
9. G. Brost, P.D. Horn, and A. Abtahi, *Appl. Opt.* **24**, 38-40 (1985).

ԴՐԱՄԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1. Ю. О. Аветисян, А. С. Акопян, В. Р. Татевосян, "Исследование плазмонного терагерцового волновода, образованного диэлектрическим гребнем на поверхности полупроводника," Изв. НАН Армении, Физика, т.46, № 5, с.361-367 (2011).
2. H. S. Hakobyan, "Plasmonic mode confinement in InAs–SiO₂–Si waveguide in terahertz region," Proc. of the YSU, Phys. and Mathem. Sci., № 3, pp. 58-61 (2011).
3. Yu. H. Avetisyan, H. S. Hakobyan, A. H. Makaryan, Kh. V. Nerkararyan, "Analysis of terahertz wave propagation in gap plasmon waveguide formed by two cylinders," Arm. J. Phys. **3**, pp. 69-77 (2010).
4. Yu. H. Avetisyan, A. H. Makaryan, H. S. Hakobyan, K. L. Vodopyanov, "Dispersion-Free 2-D Confined Terahertz Pulses Propagation in Gap Waveguide Formed by Two Cylindrical Surfaces," Tech. Dig. CLEO/QELS-2010, San Jose, USA, paper CTuQ2.
5. Yu. H. Avetisyan, A. H. Makaryan, H. S. Hakobyan, T. N. Poghosyan, "Two-dimensional confined terahertz wave propagation in gap plasmon waveguide formed by two cylindrical surfaces," *Modern Optics and Photonics*, ed. by G.Yu. Kryuchkyan, G.G. Gurzadyan, A.V. Papoyan, World Scientific, pp. 325-338 (2010).
6. H. S. Hakobyan, Yu. H. Avetisyan, "Terahertz surface plasmon-polariton confinement in ridge waveguide formed on InSb substrate," Proc. of 8 Int. Conf. Semiconductor Micro- and Nanoelectronics, Yerevan, Armenia, July 1-3, pp. 67-70 (2011).
7. H. S. Hakobyan, Yu. H. Avetisyan, A. A. Barsegyan, "Simulations of THz wave propagation in gap plasmon waveguide formed by two cylindrical surfaces," Proc. of The Technique of Microwave and THz Waves (IRPhE'2010), Aghveran, Armenia, September 23-25, pp. 6-9 (2010).

РАСПРОСТРАНЕНИЕ ТЕРАГЕРЦОВОГО ИЗЛУЧЕНИЯ В МЕТАЛЛИЧЕСКИХ И ПЛАЗМОННЫХ ВОЛНОВОДАХ

АННОТАЦИЯ

Терагерцевый (ТГц) диапазон электромагнитных волн представляет большой интерес как для фундаментальной физики, так и для многих практических применений. В последние годы, в связи с необходимостью создания компактных устройств ТГц диапазона, резко возрос интерес к волноводам, удерживающим электромагнитное поле в размерах меньших, чем длина волны. В оптическом диапазоне поверхностные плазмон-поляритоны (ППП) показали отличные возможности для достижения субволновой концентрации электромагнитной волны на границе раздела металл–диэлектрик. Однако, идея применения ППП над металлической поверхностью не может быть непосредственно перенесена с оптического диапазона в ТГц область частот. Коллективные колебания электронов могут эффективно возбуждаться только на частотах, близких к плазменной частоте, которая, как известно, в большинстве металлов лежит в ультрафиолетовом диапазоне спектра. Поэтому для возбуждения ППП в ТГц диапазоне необходимы материалы со сравнительно низкой плазменной частотой. Среди различных подходов наиболее привлекательным является использование полупроводников, в которых из-за низкой концентрации электронов проводимости плазменная частота лежит в ТГц диапазоне.

В работе разработаны и исследованы металлические и плазмонные волноводы ТГц диапазона, обеспечивающие субволновую двухмерную локализацию ТГц поля на сравнительно больших длинах распространения. Особое внимание уделено возможности бездисперсионного распространения ультракороткого ТГц импульса в Щелевом Волноводе, образованном узким зазором между двумя Цилиндрическими Поверхностями (ЩВЦП).

Аналитически, методом численного моделирования и экспериментально получены следующие основные результаты:

1. Показано, что благодаря плазмонному характеру распространения волны в ЩВЦП может быть реализована двухмерная субволновая локализация ТГц поля.

Исследована зависимость степени локализации моды от геометрии волновода (радиус цилиндров, расстояние между цилиндрическими поверхностями) и от диэлектрической проницаемости материала покрытия цилиндров.

2. Теоретически и экспериментально показано, что в металлическом ЩВЦП ультракороткие (с длительностью ~ 0.5 пс) ТГц импульсы распространяются без заметных искажений формы и с малыми потерями. Получено хорошее согласование падающего ТГц излучения с волноводом, благодаря входному отрезку с плавно изменяющимся размерами.
3. Показано, что использование легированного кремния в качестве материала ЩВЦП приводит к усилению локализации моды, однако длина распространения убывает из-за роста ТГц поглощения на свободных носителях заряда. Таким образом, изменения степень легирования кремния можно управлять соотношением величин локализация - потери.
4. Исследован плазмонный ТГц волновод, образованный кварцевым (SiO_2) прямоугольным гребнем на поверхности собственного полупроводника InSb. Показано, что в отличие от обычных плазмонных волноводов, можно одновременно обеспечить высокую степень локализации поля и сравнительно большую длину распространения. Сравнение распределений поля, рассчитанных методами эффективного показателя преломления и численного моделирования, указывает на хорошее согласие, особенно при не слишком малых размерах гребня.
5. В гибридном ТГц плазмонном волноводе, образованном InAs- SiO_2 -Si структурой, электромагнитное поле локализуется в основном в SiO_2 -зазоре. Показано, что волновод поддерживает распространение сильно локализованной моды (с размерами моды $0.0016\lambda \times 0.02\lambda = 3.2 \times 10^{-5} \lambda^2$ на частоте 1 ТГц) на длинах ~ 1 мм, достаточных для соединений в пределах интегральной схемы.

Исследованные волноводы с субволновой локализацией и сравнительно малыми потерями могут быть использованы в компактных интегральных ТГц систем нового поколения. Эти волноводы могут найти так же широкое применение в области ТГц спектроскопии тонкопленочных материалов, в системах построения ТГц изображений и высокоскоростной телекоммуникации.

TERAHERTZ WAVE PROPAGATION IN METAL AND PLASMON WAVEGUIDES

ANNOTATION

The terahertz (THz) range of electromagnetic waves is of great interest for both fundamental physics and many practical applications. In recent years, in connection with the need in creation of compact THz-range devices, the interest to waveguides holding the electromagnetic field within the size smaller than the wavelength rose sharply. In the optical range, the surface plasmon-polaritons (SPP) exhibit excellent possibilities to achieve subwave concentration of the wavefield on the metal–dielectric interface. However, the idea to employ SPP over a metal surface cannot directly be transferred from the optical to THz range. Collective vibrations of electrons (plasmon) may effectively be excited at only the frequencies close to the plasma frequency, which is known to lie in the UV range of spectrum for the majority of metals. Therefore excitation of THz-range SPP requires materials with relatively low plasma frequency. Among different approaches the use of semiconductors where the plasma frequency lies in THz range due to low concentration of conduction electrons is the most attractive. A distinctive peculiarity of semiconductors is the possibility to control the plasma frequency (by varying temperature or irradiating), which is useful for many practical applications.

The dissertation is devoted to development and investigation of the metal and plasmon waveguides, providing the two-dimensional subwavelength localization of the THz field at relatively large propagation length. Particular attention is paid to the possibility of undistorted propagation of ultra-short (broadband) THz pulses in the Waveguide, formed by a narrow gap between two Cylindrical Surfaces (WCS).

The main results can be summarized as follows:

1. The two-dimensional (2D) confinement of THz field is obtained in WCS due to curved surfaces of cylinders. The THz field confinement in waveguide depends on radius of the cylinders, distance between cylinders and dielectric constant of the material of cylinders.
2. The low-loss undistorted propagation of the broadband THz pulses is experimentally demonstrated in metal WCS. The tapered section in the input of WCS allows to increase a coupling efficiency of the incident THz beam with waveguide.
3. It is theoretically shown that WCS made of doped Si can provide stronger confinement than the metal WCS, though propagation length is decreased due to free-carriers absorption of THz wave in doped Si. By changing the dopant concentration in Si, a trade-off between confinement and attenuation can be found, according to intended application of the waveguide.
4. It is shown that the plasmon THz waveguide formed by SiO_2 -ridge on InSb surface can provide 2D subwavelength confinement of THz field. In contrast to common plasmon waveguides, the mode size can be reduced simultaneously with the increase of the propagation length by choosing the appropriate ridge size. A comparison of the field distributions, calculated by effective-index method with those obtained by numerical simulation indicates a good agreement, especially when ridge sizes are not too small.
5. The THz field in InAs- SiO_2 -Si waveguide structure is mainly confined in SiO_2 gap of the waveguide. It is shown that the waveguide can support extremely strong confined guided mode (with sizes $\sim 0.0016\lambda \times 0.02\lambda$ or mode area $3.2 \times 10^{-5}\lambda^2$ at 1 THz) at relatively long propagation length ~ 1 mm.

The investigated waveguides due to strong 2D confinement of THz field and relatively small losses create suitable preconditions for the development of compact integrated THz circuits. Also these waveguides can find wide application in THz spectroscopy, THz imaging and high-speed telecommunication systems.